



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅ, ՂԸՊՏԻ ԵՆ ԱՍՈՐԻ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱՔ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, յանձնա Հայ Առաքելական Եկեղեցւոյ զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք Տերտերեանի, Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի, եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոսի, տարուան ընթացքին միատեղ պատարագ, եկեղեցական արարողութիւններ, եկեղեցականաց հաւաքներ, երիտասարդաց թէ աշակերտական աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:

Նախապէս ծրագրուած եւ կազմակերպուած յայտագրով Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2006ին, հովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդ Սրբազան Հայրերուն՝ Ղըպտիներու Հրեշտակապետ Միքայէլ Եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10-էն յետմիջօրէ ժամը 4:00, տեղի ունեցաւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական միօրեայ հաւաք:

Աշակերտներու արձանագրութեան յաջորդող առաւօտեան ժամերգութեան, քոյր եկեղեցիներու հոգեւորականներ եւ աշակերտներ իրենց մայրենի լեզուներով մասնակցեցան եկեղեցական արարողութեան: Առաջնորդ Հայրեր աշակերտութեան, ուսուցչական կազմերուն բարի գալստեան եւ քաջալերական խօսքեր արտասանեցին ու հոգեւոր պատգամներ փոխանցեցին, աշակերտութեան կոչ ուղղելով եւ հրաւիրելով բոլորը իրենց սրտերուն մէջ ընդունելու, բնակեցնելու եւ տեղ տալու Զրիստոսի, եւ Անոր սիրով ու ներկայութեամբ առաջնորդուելու:

Հաւաքական խմբանկարէ եւ կէսօրուան ճաշէ ետք, շուրջ երեք հարիւր հաշուող աշակերտներ, տարիքի համաձայն բաժնուեցան խումբերու եւ վարիչ-ուսուցիչներու առաջնորդութեամբ ունեցան աշխատանքային դաստիարակչական դասաապահ: Զսան խումբերու բաժնուած աշակերտներ մտերմացան աստուածաշնչական եւ աւետարանական դէպքերու, դէմքերու եւ հերոսներու (աշխարհի ստեղծագործութիւն, Զրիեղեղ, Աբրահամ, Մովսէս, Դաւիթ ու Գողիաթ, Զրիստոսի կատարած հրաշքներէն՝ Կանայի Հարսանիքը, Յայրոսի աղջկան յարութիւնը, Ղազարոսի յարութիւնը, անդամալոյծին բժշկութիւնը, Պօղոս Առաքեալ, Մարիամ Աստուածածին), ինչպէս նաեւ ծանօթացան Ուղղափառ Եկեղեցիներու հիմնադիրներներուն, ազգային սուրբերու եւ աստուածաբան եկեղեցական տիտաններուն՝ (Ս. Գրիգոր, Ս. Աթանաս, Ս. Եփրեմ Ասորի), միաժամանակ իրագէլ

եղան Նիկիական Ուղղափառ Հաւատամքի (325) գումարման դրդապատճառներուն եւ անոնց տուն տուող պատմական ու դաւանաբանական այժմեական արժէքին:

Դասարանային աշխատանքներու աւարտին իւրաքանչիւր խումբ սերտուած նիւթերու եւ աստուածաշնչական պատումներու ամփոփ ներկայացումը գծանկարներով եւ պատկերուած ցուցատախտակներու վրայ ամփոփ ներկայացուց: Իսկ Յրեշտակապետ Միքայէլ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Հայր Աթանաս Ռադէպ, Եկեղեցւոյ կողմէ աշակերտութեան նուիրեց յիշատակի խաչեր:

Միջ-կիրակնօրեայ վարժարաններու միօրեայ դաստիարակչական հաւաքը իր աւարտին հասաւ եւ կեդրոնական կազմակերպիչ յանձնախումբը եզրափակիչ եւ գնահատական խօսքերով իր շնորհակալութիւնները յայտնեց կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներուն, ուսուցչական կազմերուն եւ աշակերտութեան, որոնք քրիստոնէական հաւատքի եւ հաւաքական կեանքի օրինակելի մթնոլորտի մէջ փոխադարձ փորձառութիւններով հարստացած՝ գոհունակ սրտով վերադարձան իրենց շրջանները:

ARMENIAN, COPTIC, AND SYRIAC SUNDAY SCHOOL GATHERING

On Saturday, October 28, 2006, a one-day gathering of Oriental Orthodox Churches Sunday Schools took place at Archangel Michael Coptic Orthodox Church from 10:00 a.m. to 4:00 p.m. The gathering was held under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church.

Following registration, students from each church participated in the Morning Prayer services in their respective language. The Prelates and their representatives then welcomed the students and teachers, conveyed their encouragement and spiritual messages, and invited all the participants to accept Jesus into their hearts, and to be guided by His love.

After the group picture and lunch, close to 300 students divided into 20 groups, to take part in an educational session on episodes and parables from the Bible, after which each group presented their specific topic to the others. Father Athanasius Ragheb, Pastor of Archangel Michael Church then presented the students with crosses.

The gathering concluded with remarks by the organizing committee, in which they commended the Sunday School directors, teachers, and students, and thanked them for their participation.